

## #MyArmenianStory Հարցազրույցի ուղեցույց

«#MyArmenianStory»-ն Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական ինստիտուտի բանավոր պատմության նախագիծ է, որ հանրությունից հարցազրույցների միջոցով հավաքում ու գրանցում է հայերի կյանքերի պատմություններ: Ծրագրի նպատակն է՝ նպաստել անհատական պատմությունների արձանագրմանը, հավաքմանն ու վավերագրմանը և դրանք որպես ազգային պատմության մաս վերակազմելուն: Իմաստը ընտանեկան պատմություններ բացահայտելն ու գրանցելն է: Կարող եք սկսել որտեղից ուզեք՝ ձեր ծնողներից, ազգականներից, հարևաններից, ընկերներից և այլն: Բոլորի պատմություններն էլ հետաքրքիր են, ու դրանք միասին կազմում են հայոց պատմությունը: Դուք այս կերպ իմանում եք ձեր սեփական պատմությունը և միաժամանակ տարածում եք ձեր փորձառությունն ու գիտելիքը: #MyArmenianStory նախագիծը կստեղծի հայկական փորձառության ընդգրկումն ու խորությունն արտացոլող պաշարահիմք:

*Սա Ձեր հարցազրույցն է: Ինչդուրս ենք ցանկացած հարց տալ: Մենք առաջարկում ենք երկու հարցազրույցի ուղեցույց՝ կարճ և ընդլայնված: Կարող եք յուրաքանչյուրն օգտագործել կամ դրանք զուգակցել: Պետք է նշել, որ այս հարցերը կարող են հարմարեցվել՝ կախված հարցազրույցի մասնակցի նախապատմությունից: Իտախուսեք հարցազրույցի մասնակցին, որ պատասխանը բացատրող օրինակներ բերի և դրա հետ կապված անեկդոտներ և պատմություններ պատմի: Հարցերը սկսեք «Պատմե՛ք ինձ... մասին» արտահայտությամբ, որ կիջթանի նրանց խոսքի սկիզբը:*

### Հարցազրույցի անցկացումը

- Հարցազրույցի գրանցումը սկսեք հետևյալով
  1. Մեղմե՛ք գրանցման կոճակը:
  2. Նշե՛ք ամսաթիվը:
  3. Ներկայացրե՛ք Ձեզ և Ձեր գտնվելու վայրը:
  4. Ներկայացրե՛ք հարցազրույցի մասնակցին և նրա գտնվելու վայրը:
  5. Մինչև առաջին հարցը տալը՝ կարդացե՛ք սույն համաձայնության թերթիկը և հարցազրույցի մասնակցին խնդրե՛ք, որ «այո» ասելով տա իր բանավոր համաձայնությունը:

*a. Այս հարցազրույցում տեղեկություններ տրամադրելով՝ ես հաստատում եմ, որ տալիս եմ իմ թույլտվությունը, որ այս տեսագրությունը/ձայնագրությունը Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտության ինստիտուտի հետազոտությունների հավաքածուի մաս կազմի և հասանելի լինի հետազոտողների, ուսանողների, կինոգործիչների և գիտնականների համար:*

- Հարցազրույցի վերջում 10 վայրկյանի լռության պատուհան թողեք մինչև տեսագրություն/ձայնագրությունն ավարտելը:



**#MyArmenianStory**  
**Հարցազրույցի ուղեցույց (կարճ տարբերակ)**

Թերևս օգտակար կլինի, եթե հարցազրույց տվողի կյանքի պատմությանը մոտենաք ինչպես մի գրքի տարբեր գլուխների: Հետևյալ կարգերը համարեք գլուխների վերնագրեր և խորամուխ եղեք նյութի մեջ՝ էական փորձառությունները, շրջադարձերը ու մարտահրավերները բացահայտելու համար:

**Վաղ մանկություն.** Վայր, ամսաթվեր, անուններ, ընտանիք, առօրյա կենցաղի հիշողություններ

**Ընտանիքի նախապատմություն և արմատներ.** Ինչքան հեռու կարող եք ընտանիքի հետքերով գնալ, ինչքան հեռու գնալով կարող եք անուններ տալ, նշել բարեկամական կապերը Ձեզ հետ, որտեղից են նրանք ու երբ և ինչու են հեռացել, ընտանիքի կյանքը, շփումներ, լեզու, խաղեր, խոհանոց, տոներ

**Երկրից երկիր տեղափոխում.** Ուղևորությունները, ուր գնալու որոշումները, ով օգնեց, ինչ էին զգում, կյանքը նոր երկրում, նոր միջավայրին մերվելը կամ հարմարվելը, ի՞նչ է ‘տունը’ կամ ‘տուն դառնալը’

**Համայնքային կյանք.** Կյանքն անմիջական ընտանիքից դուրս: Եկեղեցի, դպրոցներ, կազմակերպություններ

**Ամուսնություն և ընտանիք.** Կնոջն/ամուսնուն հանդիպելը, հարսանիք, վաղ ամուսնական կյանք, երեխաներին մեծացնելը, սպասումներ, դժվարություններ

**Կրթություն.** Տարրական և ավագ դպրոցի կյանքը, հիշողություններ, պատմություններ, քոլեջ և համալսարան, ընտրություններ, մարտահրավերներ, սպասումներ

**Ապրուստի ապահովում.** Կարիերայի ընտրություն, բիզնես սկսելը, ընտրություններ կատարելը, ով օգնեց, ինչ մարտահրավերներ, սխալներ և հաջողություններ են եղել

**Հայաստան.** Վաղ տարիքի պատմություններ, տպավորություններ, այցելություններ, փորձառություններ

**Արևմտյան Հայաստան.** Այցելություններ, տպավորություններ, այցելելու ցանկություններ

**Խոհեր ապագայի մասին.** Մեփական անձին, ընտանիքին, ազգին առնչվող սպասումներ

Բացի այդ, հարցրե՛ք **Հայաստանի և Մփյուռքի** մասին մտքերի և զգացմունքների մասին: Երեք ցուցիչ կա, որոնց մասին պետք է հարցնել.

**Ցեղասպանությունից առաջ և հետո.** Անցած հիշողություններ, պատմություններ, զգացողություններ

**Խորհրդային Միության կամ Մփյուռքի տարիներ.** Փորձառություններ տարբեր երկրներում Մփյուռքի համայնքների ներսում, փորձառություններ խորհրդային համակարգի ներսում

**Անկախ Հայաստանի տարիներ.** [Նրանց համար, ովքեր այցելել են Հայաստանը] Ծփումներ անկախ Հայաստանի հետ, տպավորություններ, զբաղմունք, սպասումներ: [Նրանց համար, ովքեր ապրել են Հայաստանում] Կյանքի փոփոխությունները հետխորհրդային Հայաստանում, անկախության տարիների հիշողություններ, սոցիալական փոփոխություններ, նոր համակարգեր և կանոններ

**#MyArmenianStory**  
**Հարցազրույցի ուղեցույց (ընդլայնված տարբերակ)**

Այս ընդլայնված հարցազրույցը լի է տարատեսակ հնարավոր հենքեր ունեցող հարցերով: Ընտրեք այն հարցերը, որ առնչվում են տվյալ դեպքին, ու հանգիստ անցեք անվականների վրայով: Թեև ամեն մի բաժին պարունակում է բազում հարցեր, տվեք դրանք մեկ առ մեկ, առանձին, երբ հարկ կա, այնպես, որ հարցազրույց տվողը չճնշվի հարցերի տարափից:

**Վաղ մանկություն և ընտանիքի նախապատմություն**

- Իսնդրում ենք նշել Ձեր անունը:
- Ինչպե՞ս են Ձեր անունն ընտրել: Ո՞վ է այն ընտրել: Այն ինչ-որ բան նշանակո՞ւմ է: Ձեզ ինչ-որ մեկի անո՞ւնն են տվել: Այն որևէ նշանակություն ունի՞:
- Ե՞րբ և որտե՞ղ եք ծնվել:
- Ընտանիքում քանի՞ երեխա եք եղել և Դուք ո՞րերորդն եք: Ի՞նչ են Ձեր եղբայրների և քույրերի անունները: Ո՞վ է ընտրել նրանց անունները:
- Ինչպիսի՞ն էր Ձեր առօրյան: Ի՞նչ խաղեր էիք խաղում: Ո՞ւմ հետ: Ինչո՞վ էիք խաղում: Ի՞նչ էիք անում, երբ ձանձրանում էիք: Ո՞րն էր Ձեր սիրած ուտեստը:
- Ինչպե՞ս էր Ձեր ընտանիքը տոնում տոները: Ո՞ր տոներն ու տոնակատարություններն էին ամենակարևորը: Ի՞նչ ուտեստներ էին սարքվում: Ո՞վ էր ուտելիք սարքում:
- Պատմե՛ք ինձ Ձեր ծնողների, տատիկ-պապիկների և ընտանիքի նախապատմության մասին
  - Ծագմամբ ո՞րտեղից էին:
  - Ե՞րբ են տեղափոխվել: Ինչո՞ւ:
- Ձեր հոր զբաղմունքը: Ձեր մոր զբաղմունքը: Դուք ընտանիքի եկամտի ստացման հարցում ներդրում ունենո՞ւմ եք կամ ունենո՞ւմ էիք կամ որևէ կերպ Ձեր ծնողներին նրանց աշխատանքում օգնո՞ւմ եք/էիք:
- Ո՞րն է/եր Ձեր ծնողների կրոնական նախապատմությունը: Ինչպե՞ս էին Ձեր ընտանիքում կրոնին հետևում: Կանոնավոր կերպով էիք գնում եկեղեցի՞, թե՞ միայն հատուկ առիթներով:
- Ձեր ընտանիքը որպես քաղաքական կրնությագրե՞իք: Եթե այո, որո՞նք էին Ձեր ընտանիքի քաղաքական համոզմունքները: Ի՞նչ քաղաքական կազմակերպություններում էին ներգրավված: Եթե նրանք ներգրավված չէին կամ հետաքրքրված չէին քաղաքական կազմակերպություններով, ապա ինչո՞ւ էր դա այդպես:
- Ի՞նչ եք հիշում Ձեր տատիկ-պապիկների մասին: Ինչպե՞ս էին նրանք ներգրավված Ձեր կյանքում:
- Ինչպիսի՞ պատմություններ եք լսել ավելի վաղ նախնիների մասին, որոնց Դուք երբեք չեք ճանաչել: Գիտե՞ք՝ որտեղ են ապրել: Այս պատմությունները Ձեր վրա ազդեցություն ունեցե՞լ են: Ինչպե՞ս:
- Նկարագրե՛ք ինչպիսին են Ձեր քույր-եղբայրները: Ո՞ւմ հետ ամենամոտ հարաբերություններն ունեիք: Ինչո՞ւ:
- Նկարագրեք տունը, որտեղ մեծացել եք:
- Ինչպիսի՞ն էր Ձեր ընտանիքի տնտեսական վիճակը: Ունեի՞ք այն ամենն, ինչ Ձեզ անհրաժեշտ էր: Ծանապարհորդո՞ւմ էիք: Ձեր հարևանների համեմատ Ձեզ հարո՞ւստ, թե՞ աղքատ էիք զգում: Դուք որևէ դասի պատկանելու գիտակցություն ունեի՞ք:
- Որո՞նք էին տանը Ձեր՝ երեխայական պարտականությունները: Որո՞նք էին Ձեր եղբայրների և քույրերի պարտականությունները: Կա՞ր պարտականությունների բաժանում ըստ սեռի::
- Ի՞նչ էիք մտածում Ձեր ապագա մասնագիտության մասին: Ի՞նչ էին Ձեր ծնողները ձեզանից սպասում:
- Ո՞ր լեզվով/լեզուներով էիք տանը խոսում: Լեզուների հետ կապված որևէ քաղաքականություն կա՞ր (օրինակ՝ տանը միայն հայերենի գործածում):

- Ինչե՞ր էիք անում ամբողջ ընտանիքով: Ձեր ծնողների հետ մոտ հարաբերություններ ունեի՞ք: Ձեր զգացմունքներով կիսվո՞ւմ էիք նրանց հետ: Ինչո՞ւ այդ, կամ ինչո՞ւ ոչ: Ո՞ր լեզվով: Տարբեր սերունդների միջև լեզվական արգելքներ կայի՞ն:
- Ընտանիքում կայի՞ն արգելված կամ քննարկման ոչ ենթակա թեմաներ: Ձեզ բացահայտ ասել է՞ին, որ դրանք քննարկելի չեն, թե՞ դա պարզապես ենթադրվում էր: Թե՞ Ձեզ համար անհարմար էր որոշ բաների մասին ծնողների հետ խոսելը: Արդյո՞ք լեզվական արգելքները խնդիր էին որոշ թեմաներ քննարկելիս:

**Համայնք, որտեղ մեծացել եք**

- Նկարագրե՛ք համայնքը, որտեղ մեծացել եք:
- Ո՞ւմ հետ էիք շփվում: Հայերի՞, թե՞ այլազգիների հետ:
- Ի՞նչ գործունեության մեջ էիք ներգրավված: Դուք որևէ ցանցի կամ կազմակերպության (քաղաքական, մշակութային, մասնագիտական, սպորտային) անդամ էիք: Ի՞նչ էին այս կազմակերպություններն անում: Ո՞րն էր Ձեր դերը: Արդյո՞ք այդ գործունեությունը ձևավորել է Ձեր կյանքը: Ի՞նչ ազդեցություն են ունեցել Ձեր վրա:
- Նկարագրե՛ք ձեր հարևանությունը: Ճանաչո՞ւմ էիք Ձեր հարևաններին:
- Ո՞րտեղ եք դպրոց գնացել: Նկարագրե՛ք Ձեր դպրոց(ներ)ը, ուսուցիչներին, դասընկերներին: Լավ աշակերտ էիք: Լեզվական արգելքներ կայի՞ն: Դպրոցում ի՞նչ էիք հագնում: Ինչպիսի՞ն էր Ձեր ընդհանուր փորձառությունը դպրոցում: Ո՞վքեր էին Ձեր ընկերները: Հիմնականում հայ էի՞ն, այլազգի՞, թե՞ խառնուրդ: Արդյո՞ք այդ հարաբերությունները տարբեր էին: Որո՞նք են Ձեր դպրոցական տարիների ամենասիրելի և ամենաքիչ սիրելի հիշողությունները: Դուք ստիպվա՞՞ծ էիք երգեր կամ բանաստեղծություններ անգիր անել դպրոցում: Հիշո՞ւմ եք դրանք: Եթե այո, կարո՞ղ եք երգել/արտասանել:
- Ի՞նչ եք արել Դուք ավագ դպրոցից հետո:

**Բարձրագույն կրթություն (եթե առկա է)**

- Համալսարանում սովորե՞լ եք: Տնից հեռո՞ւ եք սովորել: Ի՞նչ կոչումներ եք ստացել: Ո՞րն էր ձեր մասնագիտությունը: Ինչպե՞ս և ինչո՞ւ եք այն ընտրել: Ինչպիսի՞ն էր ձեր համալսարանի փորձառությունը: Ովքե՞ր էին Ձեր ընկերները: Հիմնականում հայ էի՞ն, այլազգի՞, թե՞ խառնուրդ: Որո՞նք են Ձեր համալսարանական տարիների ամենասիրելի և ամենաքիչ սիրելի հիշողությունները:

**Ծագման երկրից հեռանալը (եթե տվյալ դեպքում է/եթե տվյալ դեպքին առնչվում է)**

- Ե՞րբ եք հեռացել: Ո՞ր եք գնացել:
- Որո՞նք են եղել հեռանալու պատճառները:
- Ո՞վ է կայացրել հեռանալու որոշումը:
- Ինչպիսի՞ն էր ձեր տրամադրությունը մինչև մեկնելը: Ձեր ընկերները և ծնողները Ձեր մեկնելուն կո՞ղմ էին, թե՞ դեմ:
- Ի՞նչ գիտեիք այն երկրի մասին, ուր տեղափոխվում էիք: Ի՞նչ տպավորություններ ունեիք այդ վայրից և ինչո՞ւ:
- Դուք ոգևորվա՞՞ծ էիք հեռանալու փաստով: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:
- Դուք նոր երկրում ընկերներ կամ բարեկամներ ունեի՞ք: Նրանք Ձեզ խրախուսե՞լ են, որ իրենց միանաք:

- Որո՞նք էին նոր երկրի վերաբերյալ Ձեր տեղեկատվության աղբյուրները:
- Տեղափոխվելու հնարավոր վայրերի ցուցակում այլ երկրներ կայի՞ն:
- Ինչպիսի՞ն էր ներգաղթի գործընթացը: Դժվար է՞ր, թե՞ հեշտ:
- Արդյո՞ք ստիպված էիք այլ երկրներով անցնել մինչև նպատակակետին հասնելը: Որքա՞ն մնացիք տարանցիկ երկրում: Ինչպիսի՞ն էր այդ փորձառությունը:

**Տեղափոխում նոր երկիր / ներգաղթ (եթե տվյալ դեպքին առնչվում է)**

*Հարմարեցնել այս հարցերը, որպեսզի դրանք համապատասխանեն Ձեր գրուցակցի փորձառությանը և հանգամանքներին: Եթե Ձեր գրուցակիցը մի քանի երկիր/նահանգ է փոխել, այս հարցերը պետք է կիրառեք յուրաքանչյուր տեղափոխման համար:*

- Ե՞րբ (օր, տարի) եք ժամանել: Ո՞ր եք ժամանել: Ո՞վ է Ձեզ դիմավորել: Քանի՞ տարեկան էիք:
- Ամբողջ ընտանիքով ե՞ք եկել, թե՞ ընտանիքը բաժանվել է:
- Ի՞նչ էիք զգում ժամանելու օրը: Ինչո՞ւ:
- Ո՞րտեղ եք մնացել առաջին օրերի/ շաբաթների ընթացքում:
- Ինչպիսի՞ն էր նոր երկրի տեղափոխումը: Ձեր կարծիքով ինչքա՞ն ժամանակում դուք հարմարվեցիք այդ վայրին: Բացատրեք ներգաղթյալ լինելու հետ կապված դժվարությունները:
- Ինչպիսի՞ն էին Ձեր փորձառությունները դպրոցում:
- Դպրոցում որևէ խտրականության ենթարկվե՞լ եք կամ դրա ականատես եղե՞լ եք: Խնդրում ենք բացատրել:
- Լեզվական արգելքներ կայի՞ն: Ի՞նչ եք արել դրանք հաղթահարելու համար:
- Տեղափոխման ժամանակահատվածում որևէ պահ եղե՞լ է, երբ մտածեք վերադառնալու մասին: Ինչո՞ւ:
- Դուք շփվո՞ւմ էիք այն երկրի մարդկանց հետ, որից հեռացել էիք էիք: Ինչպե՞ս: Ինչո՞ւ: Ի՞նչ խոսակցություններ էիք ունենում: Ո՞րն էր հաղորդակցության հիմնական միջոցը:
- Նկարագրեք Ձեզ հանդիպած դժվարությունները: Ամենաշատը ի՞նչն էիք կարոտում այն երկրից, որից հեռացել էիք:
- Նկարագրեք այս անցումային ժամանակահատվածի լավագույն պահերը:
- Որևէ հաստատված հայկական համայնք կա՞ր: Եթե այո՝
  - Նկարագրե՞ք հայկական համայնքը այնպես, ինչպիսին Դուք այն տեսաք, երբ առաջին անգամ ժամանեցիք: Ի՞նչ էիք զգում: Ո՞րն էր Ձեր դերը համայնքում, եթե այն կար: Դուք զգո՞ւմ էիք, որ համայնքի մաս եք կազմում: Ինչո՞ւ այո, կամ ինչո՞ւ ոչ:
  - Դուք զգո՞ւմ էիք, որ հայկական համայնքը Ձեզ ընդունել է: Ունե՞լիք զգացողություն, որ Ձեր նկատմամբ կողմնակալ վերաբերմունք ունեն: Ձեր նկատմամբ պարսավական վերաբերմունք զգո՞ւմ է՞իք:
  - Եթե միացել եք որոշ հայկական կազմակերպությունների, ապա խոսե՞ք դրանց մասին:
  - Ինչպե՞ս էիք վերաբերվում որոշ կազմակերպությունների կրոնական և քաղաքական կողմնորոշմանը: Ի՞նչ ազդեցություն են դրանք ունեցել Ձեզ վրա:
  - Դուք երբևէ դրամական նվիրատվություն արե՞լ եք հայկական կազմակերպությունների: Որո՞նց և ինչո՞ւ դրանց:
  - Դուք միացել է՞ք որևէ ոչ հայկական կրոնական կամ այլ կազմակերպության: Ինչո՞ւ այո կամ ինչո՞ւ ոչ: Եթե այո ապա որո՞նց:
  - Ժամանելուց հետո դպրոց հաճախե՞լ եք: Ի՞նչ եք սովորել: Ո՞րտեղ եք սովորել: Որո՞նք էին Ձեր կարիերայի հետ կապված ծրագրերը/նպատակները:
  - Կարոտո՞ւմ էիք այն վայրերը, որտեղից մեկնել էիք: Ի՞նչն էիք կարոտում: Ինչո՞ւ:
  - Վերադարձե՞լ եք այցելության նպատակով: Եթե այո, ինչպիսի՞ն էր Ձեր փորձառությունը: Այդ տեղը (տեղերը) փոխվե՞լ էր (էին): Ինչպե՞ս: Չդժո՞ւմ էիք հեռանալու որոշում կայացնելու համար:

## **Ամուսնություն և ընտանիք**

- Ամուսնացել էք:
- Ե՞րբ և որտեղ եք հանդիպել Ձեր կնոջը/ամուսնուն: Ի՞նչը Ձեզ գրավեց նրա մեջ: Նկարագրեք Ձեր ժամանակակից հարաբերությունները: Դա բնորոշ էր այդ ժամանակաշրջանին: Մարտահրավերներ կայի՞ն: Ձեր ամուսնանալուն որևէ մեկը դեմ եղե՞լ է:
- Ե՞րբ և ինչպե՞ս եք որոշել ամուսնանալ: Ինչպե՞ս անցավ Ձեր հարսանիքը: Դա այդ ժամանակաշրջանին բնորոշ հարսանիք էր:
- Երեխաներ ունեցե՞լ եք: Եթե այո, ապա՝ քանի՞սը:
- Ինչպե՞ս եք ընտրել Ձեր երեխաների անունները:
- Ինչպիսի՞ փորձառություն էր երեխաներ մեծացնելը: Վախենո՞ւմ էիք: Նրանց կրթության հարցերում ներգրավված եղել ե՞ք:
  - Եթե երեխաներին Մփյուռքում էիք մեծացնում, հատուկ մարտահրավերներ եղե՞լ են:
  - Ուզո՞ւմ էիք, որ նրանք խոսեն/սովորեն/իմանան հայերեն: Ինչո՞ւ այդ կամ ինչո՞ւ ոչ:
  - Ինչպե՞ս եք որոշել Ձեր երեխաներին ինչ դպրոց ուղարկել: Կարևո՞ր էր, որ Ձեր երեխաները մասնակցեին արտադպրոցական միջոցառումներին: Ինչո՞ւ այդ կամ ինչո՞ւ ոչ:
  - Ի՞նչ էիք մտածում Ձեր երեխաների մասնագիտության ընտրության մասին:
  - Ե՞րբ են նրանք սկսել ժամադրություններ ունենալ կամ մտածել ամուսնության մասին:
  - Ձեր երեխաներից ակնկալիքներ ունեի՞ք: Նրանք գիտեի՞ն, որ ունեիք այդ ակնկալիքները:
  - Ձեր սեփական պատմությունից և անձնական փորձառություններից որքանո՞վ եք կիսվել նրանց հետ: Ինչո՞ւ այդ կամ ինչո՞ւ ոչ: Ունեի՞ք զգացողություն, որ Ձեր երեխաները հասկանում են Ձեզ: Դուք նրանց հասկանո՞ւմ էիք:

## **Քիզներ / աշխատանք**

- ԵԹԵ ԱՌԿԱ Է. Ե՞րբ եք սկսել աշխատել: Ի՞նչ աշխատանք էր: Այն առնչվում է՞ր Ձեր նախորդ կրթությանը: Ինչո՞ւ / ինչպե՞ս անցաք այդ գործին: Դա Ձե՞ր ընտրությունն էր: Միտո՞ւմ էիք Ձեր աշխատանքը: Ինչպիսի՞ն էին Ձեր հարաբերությունները գործատուների կամ գործընկերների հետ: Ի՞նչ այլ աշխատանքներ եք կատարել:
  - *Եթե նոր երկիր եք տեղափոխվել.* Ե՞րբ եք սկսել աշխատել: Ի՞նչ աշխատանք էր: Արդյո՞ք դա առնչվում էր ձեր կրթությանը: Ինչո՞ւ / ինչպե՞ս անցաք այս գործին: Դա Ձե՞ր ընտրությունն էր: Միտո՞ւմ էիք Ձեր աշխատանքը: Ինչպիսի՞ն էին Ձեր հարաբերությունները գործատուների կամ գործընկերների հետ: Ի՞նչ այլ աշխատանքներ եք կատարել:
- ԵԹԵ ԱՌԿԱ Է. Ե՞րբ եք ձեռնարկել Ձեր բիզնեսը: Ի՞նչը ձեզ ստիպեց ընտրել աշխատանքի այդ բնագավառը (մանրամասնե՞ք՝ ինչպե՞ս է սկսվել բիզնեսը):
  - Որտեղի՞ց հայթայթեցիք փող բիզնես սկսելու համար::
  - Նախքան սկսելը, ունեի՞ք որևէ գիտելիք տվյալ բնագավառի վերաբերյալ:
  - Որո՞նք էին այն խոչընդոտները, որոնց բախվեցիք բիզնեսն ընդլայնելիս:
  - Ձեր կինը կամ ամուսինը օգնե՞լ է Ձեր բիզնեսի կայացմանը: Ինչպե՞ս:
  - Ձեր փորձն ու գիտելիքները ինչպե՞ս են օգնել կամ խանգարել Ձեր հաջողությանը բիզնեսում:
  - Ինչպե՞ս է Ձեր աշխատանքը սահմանում հասարակության մեջ Ձեր տեղը:
  - Դեռ աշխատո՞ւմ եք: Թե՞ Ձեր գործը շարունակում են Ձեր երեխաները: Ինչո՞ւ:

**Քազմակի ինքնություն (եթե առնչվում է տվյալ դեպքին. մենք որպես օրինակ գործածում ենք լիբանանցիներին, բայց Դուք այն փոխարինեք այն երկրով/երկրներով, որտեղից սերում է հարգագրույց տվողը)**

- Դուք հաճախում եք այնպիսի վայրեր, որտեղ առնչվում եք այն երկր(ներ)ից եկած այլազգիների, որտեղից սերում եք Դուք (Լիբանան, Իրան, Թուրքիա, Սիրիա, Ռուսաստան և այլն):
- Ձեր ներկայացմամբ Դուք սերում եք մեկ վայրի՞ց, թե՞ երկու վայրերից: Կամ երեք վայրերի՞ց: Օրինակ՝ Դուք լիբանանցի՞ եք, թե՞ լիբանանահ՞յ: Թե՞ լիբանանաամերիկահայ:
- Այդ քազմակի ինքնության պատճառով եղե՞լ եք այնպիսի իրադրություններում, երբ ունեցել եք անախորժ կամ մերժվածության զգացողություն:
- Ե՞րբ կամ ո՞ր իրադրություններում եք Դուք Ձեզ հայ զգում կամ համարում: Ե՞րբ եք Ձեզ զգում կամ համարում լիբանանցի:
- Դուք երբևէ ասո՞ւմ եք «վերադարձ տուն / տունդարձ»: Ո՞ր երկրին է դա վերաբերում:
- Պատահո՞ւմ է, որ գործածեք Ձեր հարազատ երկրի/երկրների լեզուն: Ի՞նչ հաճախականությամբ և ի՞նչ իրադրություններում:
- Ըստ Ձեզ՝ Ձեր խոսակցական հայերենն ի՞նչ ազդեցություն ունի Ձեր հարազատ երկրների լեզուներից կամ այն երկրի գերիշխող լեզվից, որտեղ հիմա ապրում եք: Ձեր ամենօրյա հայերենը սովորաբար ընդգրկո՞ւմ է այլալեզու բառեր, դարձվածքներ ու արտահայտություններ: Եթե այո, կարո՞ղ եք բերել մի քանի օրինակ:

**Այցելություն Հայաստան (եթե առկա է)**

- Ե՞րբ եք առաջին անգամ այցելել Հայաստան / ԽՍՀՄ:
- Ինչո՞ւ որոշեցիք այցելել:
- Ի՞նչ տպավորություններ ունեցաք: Ինչպե՞ս էին Ձեզ վերաբերվում: Ձեր ուղևորությունն արդարացրե՞ց Ձեր սպասումները:
- Զանի՞ անգամ եք կրկին այցելել: Ե՞րբ: Ինչո՞ւ:
- Դուք երբևէ աշխատե՞լ եք կամ մտածե՞լ եք Հայաստանում աշխատելու մասին (օրինակ՝ բիզնես սկսելու): Ինչո՞ւ այո կամ ինչո՞ւ ոչ:
- Եթե այցելել եք ավելի քան մեկ անգամ, ինչպե՞ս կրնաթագրելիք Հայաստանում տեղի ունեցող փոփոխությունները:
- Ինչպե՞ս եք Ձեզ զգում Հայաստանում:
- Ի՞նչ եք կարծում, ո՞րն է Սփյուռքի դերը Հայաստանում:

**Այցելություն պատմական հայկական հողեր (եթե առկա է)**

- Այցելե՞լ եք Արևմտյան Հայաստան: Ինչո՞ւ այո կամ ինչո՞ւ ոչ: Եթե այո, ապա ե՞րբ:
- Ինչպիսի՞ն էր ձեր փորձառությունը: Հուզումնալի՞ց էր: Ո՞ր տարածքներն եք այցելել: Նկարագրեք Ձեր փորձառությունները:
- Ուղևորությունը արդարացրե՞ց Ձեր սպասումները: Ինչո՞ւ այո կամ ինչո՞ւ ոչ:

### **Հայկական ինքնություն**

- Ինչպե՞ս եք բնորոշում Ձեր ինքնությունը: Դա կախված է հարցնողի հայ կամ օտարագրի լինելուց:
- Ձեզ համար ի՞նչ է նշանակում հայ լինել: Որո՞նք են հայկականության սահմանումները:
- Ինչպե՞ս եք բնորոշում հայկականությունը և ինչպե՞ս են սահմանումները ձևավորում Ձեր կյանքն ու աշխատանքը (օր.՝ ամուսնանալ հայի հետ, ֆինանսական աջակցություն ցուցաբերել Հայաստանին, այցելել Հայաստան, ապրել Հայաստանում, երաժշտական նախասիրություններ, խոհանոցի նախընտրություն):
- Ի՞նչ դեր ունի հայոց լեզուն Ձեր կյանքում և արդյո՞ք կապված է Ձեր հայկական ինքնության հետ:
- Եթե ապրում եք Սփյուռքում. Դուք երբևէ մտածե՞լ եք Հայաստան տեղափոխվելու մասին: Ի՞նչն է ազդել ձեր որոշման վրա:

### **Եզրափակիչ մտքեր / հարցեր.**

- Ո՞ր արժեքներն են օգնել Ձեզ (կամ Ձեր հարազատներից մեկին) դժվար ժամանակներում:
- Ինչպե՞ս եք սահմանում հաջողությունը: Ի՞նչ եք կարծում, հասն՞լ եք ձեր անձնական և մասնագիտական նպատակներին:
- Կա՞ն բաներ, որոնց համար գոջում կամ ավստում եք: Որո՞նք են և ինչո՞ւ:
- Որո՞նք են Ձեր կյանքի առավել հրատապ խնդիրներն այս պահին:
- Ի՞նչ խորհուրդ կտայիք երիտասարդ սերունդներին:
- Ի՞նչ կցանկանայիք, որ ձեր ծնողները և պապիկն ու տատիկը իմանան Ձեր մասին:
- Ի՞նչ կցանկանայիք, որ ձեր երեխաներն ու թոռները իմանան Ձեր մասին:
- Ի՞նչ մտահոգություններ ունեք ապագայի վերաբերյալ:
- Ինչի՞ն եք անհամբերությամբ սպասում:
- Ի՞նչ հարց կուզեիք տված լինելի: